Հաստատում եմ՝

Տնտեսության կազմակերպման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի դեկան՝ Գ.Ա.Նազարյան

«.28..»........05.............. 2018թ.

ՀԱՐՑԱՇԱՐ

«Տնտեսագիտության տեսություն» առարկայից 2018-2019 ուս. տարվա մագիստրատուրայի ընդունելության քննության

1. Մարդու մոդելները տնտեսագիտության տեսության մեջ: Մարդը և տնտեսությունը:
2. Սեփականությունը որպես տնտեսական կատեգորիա: Սեփականության իրավունքի տնտեսագիտական տեսությունը, սեփականության իրավունքի փունջը:
3. Սեփականության սպեցիֆիկացիան: Քոուզի թեորեմը:
4. Պահանջարկի տնտեսական օրենքը: Պահանջարկի կորը և պահանջարկի գին հասկացությունը:Պահանջարկի ոչ գնային գործոնները:
5. Առաջարկի տնտեսական օրենքը: Առաջարկի կորը և առաջարկի գին հասկացությունը: Առաջարկի փոփոխության վրա ազդող գործոնները:
6. Պահանջարկի և առաջարկի տնտեսական օրենքը: Հավասարակշռության գին:
7. Պահանջարկի առաձգականությունը ըստ գնի և ըստ եկամտի:
8. Առաջարկի առաձգականությունը: Դրա վրա ազդող գործոնները:
9. Իզոքվանտներ, իզոքոստներ, ծախսերի մինիմալացման և շահույթի մաքսիմալացման կանոնը:
10. Կապիտալի առաջարկի և պահանջարկի հարաբերակցությունը փոխատվական կապիտալի շուկայում: Տոկոսը որպես գործոնային եկամուտ և նրա վրա ազդող գործոնները: Տոկոսի քեյնսյան տեսությունը: Տոկոսի անվանական և իրական մակարդակը:
11. Արժեթղթերի շուկայի ֆունկցիաները և կառուցվածքը:
12. Աշխատավարձի էությունը: Աշխատավարձը որպես գործոնային եկամուտ: Աշխատավարձի մակարդակի հիմնախնդիրը: Անվանական և իրական աշխատավարձ: Նվազագույն աշխատավարձ:
13. Ծախսերի տնտեսագիտական բովանդակությունը: Այլընտրանքային ծախսեր: Հաստատուն ծախսեր, փոփոխուն ծախսեր: Ծախսերի դասակարգումը:
14. Սահմանային ծախսերի նվազող հատույցի օրենքը: Համախառն հասույթ: Սահմանային հասույթ և դրա գրաֆիկը:
15. Շահույթի տնտեսագիտական բովանդակությունը: Շահույթը որպես գործոնային եկամուտ: Հաշվապահական, նորմալ և տնտեսական շահույթ:
16. Մրցակցության էությունը և ֆունկցիաները: Շուկայական մրցակցության մոդելները: Կատարյալ մրցակցություն: Կատարյալ մրցակցության բնորոշ գծերը: MC=MR=AC=P:
17. Ոչ կատարյալ մրցակցություն: Մոնոպոլիայի էությունը և գնագոյացման մեխանիզմը: MR=MC<AC<P:
18. Օլիգոպոլիա: Օլիգոպոլիայի մրցակցության մոդելները/բեկված կոր,գաղտնի համաձայնություն,գնային լիդերություն, ծախս + / :
19. Եկամուտների բաշխման հիմնախնդիրը: Եկամուտների բաշխման սկզբունքները: Լորենցի կորը և Ջինիի գործակիցը:
20. Ամբողջական պահանջարկի կորը և նրա վրա ազդող ոչ գնային գործոնները: Տոկոսադրույքի էֆեկտը, հարստության էֆեկտը, ներմուծման էֆեկտը:
21. Ամբողջական առաջարկը և նրա կորը: Այդ կորի քեյնսյան, միջանկյալ և դասական հատվածները ու դրանց բնութագրերը:

22. Համախառն ներքին արդյունք: Դրա հաշվարկման եղանակները: Անվանական և իրական ՀՆԱ: Փոխկապակցված մակրոտնտեսական ցուցանիշների համակարգը:
23. Հարկաբյուջետային քաղաքականությունը և նրա ուղղությունները: Լաֆֆերի կորը:
24. Բյուջեի դեֆիցիտը և պետական պարտքը: Ներքին և արտաքին պարտք:
25. Փողի շուկայի հավասարակշռության նոր դասական և քեյնսյան մոտեցումները: Դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության վերլուծությունը IS-LM մոդելի միջոցով:
26. Բանկի էությունը և ֆունկցիաները: Բանկերի տեսակները:Կենտրոնական բանկը և նրա հիմնական ֆունկցիաները:
27. Փողային ագրեգատներ M1, M2, M3 : Փողի պահանջարկի և առաջարկի հավասարակշռությունը և դրա դասական, քեյնսյան և մոնետարիստական մոտեցումները:
28. Տնտեսական աճի Հարր ռդ-Դոմարի և Սոլոուի մոդելները: Տնտեսական աճի նորդասական տեսությունները և մոդելները:
29. Տնտեսական աճի հավասարակշռությունը:Դասական և քեյնսյան մեկնաբանությունները: AD-AS մակրոտնտեսական հավասարակշռության մոդելը:
30. Ինֆլյացիայի տնտեսական բովանդակությունը, պատճառները և տեսակները: Ինֆլյացիայի հետևանքները: Հակաինֆլյացիոն քաղաքականություն:

Տնտեսագիտության տեսության

ամբիոնի վարիչ *Ֆ.Մայիլյան*